

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 10-ի N112 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 3-ի N 35-Ա, 2023 թվականի փետրվարի 6-ի N 36-Ա, 2023 թվականի փետրվարի 7-ի N 37-Ա և 2023 թվականի փետրվարի 9-ի N 38-Ա որոշումների վերաբերյալ.

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ N 36-Ա որոշման մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները.

1. N 36-Ա որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի դրույթներին, բացի այդ որոշման նախաբանում և որոշման առաջին կետում համայնքի անվանումը թերի է գրառված, նախաբանում թերի է գրառված նաև արոտավայրի հասցեն:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇՈՍԱԿԱՉՍԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 03-ի թիվ 35-Ա, փետրվարի 06-ի թիվ 36-Ա, փետրվարի 07-ի թիվ 37-Ա և փետրվարի 09-ի թիվ 38-Ա որոշումների վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 06-ի թիվ 36-Ա որոշումն ընդունելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» 9-րդ և 10-րդ կետերի պահանջներով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 03-ի թիվ 35-Ա, փետրվարի 07-ի թիվ 37-Ա և փետրվարի 09-ի թիվ 38-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ

16.02.2023թ.

Կատարող՝ Ա. Մինասյան